ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-20-7/11-2

ք. Երևան 22 -ը հունվարի 2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս. Ղամբարյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և Ֆ/Ա Բագրատ Միրզոյանը, այսուհետև՝ Վաճառող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, ապրանքագրով սահմանված ժամկետից:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի, ապրանքագրով սահմանված ժամկետից:

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

2.4.11 Յուրաքանչյուր մատակարարման ամսվա 1-ին, 10-րդ և 20-րդ աշխատանքային օրերին ներկայանալ ՀՀ ՀՈՒ ԹՎ պարենային ծառայություն՝ մատակարարման ապրանքագրերը ստանալու համար:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում 43 953 981 (քառասուներեք միլիոն ինը հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր ութսունմեկ) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը

կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **քսան** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6.8 ՀՈՒ կարիքների համար կնքված պայմանագրի շրջանակներում նյութական միջոցների յուրաքանչյուր խմբաքանակի մատակարարման դեպքում իրականացվելիք հետազոտությունների և փորձարկումների բացասական արդյունքների դեպքում բացի սահմանված տույժ-տուգանքներից մատակարարը պարտավոր է փոխհատուցել նաև փորձարկման համար կատարված բոլոր ծախսերը, մասնավորապես՝ բանջարեղենի յուրաքանչյուր խմբաքանակից վերցված նմուշի լաբորատոր հետազոտության ծախսը կազմում է՝ 14000 դրամ, իսկ յուրաքանչյուր խմբաքանակից կատարվող մեկ նմուշառման ծախսը՝ հաշվի առնելով վառելիքի, աշխատուժի, օգտագործվող նյութական միջոցների համար ծախսը կկազմի հավելյալ 2500 դրամ, հասցեն՝ ք.Երևան, Արշակունյանց 73ա:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ք. Երևան, Բագրևանդի 5	Ֆ/Ա Բագրատ Միրզոյան
ՀՀ ֆինանսների նախարարության	ՀՀ, Սյունիքի մարզ, գ. Դարբաս
աշխատակազմի գործառնական վարչություն	«ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ, Սիսիանի մ/ճ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 16031036538400
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 77948224
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	
Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ	Բ. ՄԻՐԶՈՅԱՆ

Հ/Հ. Հ. Ղամբարյան
Ե.ֆ. 010350528

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-7/11-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Գնման առարկան	Տեխնիկական բնութագիր
1-10	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	Թարմ կաղամբի որակի տեխնիկական պահանջները (ԳՕՍ 1724-85) Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն խիտ կամ քիչ խիտ, բայց ոչ փխրուն: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները, թույլատրվում է կաղամբի մակերևույթը ամուր չգրկող 2-4 հատ կանաչ տերևների առկայություն: Կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն վարդաձև տերևաբույլերից և օգտագործման համար ոչ պիտանի տերևներից: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.7 կգ: Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
11-19	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	(ԳՕՍ 1724-85) Թարմ գլուխ կաղամբ՝ մթերման համար, ըստ հասունացման ժամկետի ուշահաս՝ 100%-ը <<Խարկով-2>> կամ <<Ամագեր>> տեսակի: Արտաքին տեսքը՝ գլուխները թարմ, ամբողջական, մաքուր, առողջ, լիովին ձևավորված, առանց հիվանդությունների և վնասվածքների, չծլած, տվյալ բուսաբանական տեսակին բնորոշ գույնով. ձևով ու համ ու հոտով, առանց կողմնակի հոտի և համի: Կաղամբի գլուխները չպետք է լինեն գյուղատնտեսական վնասատուներով վնասված, չպետք է ունենան ավելորդ արտաքին խոնավություն, պետք է լինեն ամուր, խիտ, բայց ոչ փխրուն և ոչ լխկած: Գլուխների մաքրման աստիճանը՝ կաղամբի գլուխները պետք է մաքրված լինեն մինչև մակերևույթը ամուր գրկող կանաչ և սպիտակ տերևները, թույլատրվում է կաղամբի մակերևույթը ամուր չգրկող 2-4 հատ կանաչ տերևների առկայություն: Կաղամբակոթի երկարությունը 3սմ-ից ոչ ավելի: Կաղամբի մաքրված գլուխների քաշը ոչ պակաս՝ 0.8 կգ: Ընդհանուր զանգվածում՝ Ճաքած և 3 սմ-ից ոչ ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով կաղամբի գլուխների զանգվածային մասը՝ 5%-ից ոչ ավելի: 3 սմ-ից ավելի խորությամբ մեխանիկական վնասվածքներով, ճաքերով, նեխած, գյուղատնտեսական վնասատուներով վնասված, ցրտահարված, շոգեհարված՝ միջուկի դեղնվածության և կարմրածության նշաններով գլուխների առկայություն չի թույլատրվում: Չի թույլատրվում նշահատված գլուխներով և կաղամբակոթերով կաղամբի առկայություն: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
20-30	բազուկ /Բազուկ վաղահաս/	Թարմ բազուկի որակի տեխնիկական պահանջները (ԳՈՍ 32285-2013) Բարձր և առաջին տեսակի: Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-10սմ: Առաջին տեսակի համար թույլատրվում է նշված չափերի շեղումներով ոչ ավել 1սմ-ից, ընդհանուր քանակի ոչ ավել 10%, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում: Առաջին տեսակի համար թույլատրվում է թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավել խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավելի, քան ընդհանուր քանակի 1%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
31-41	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	(ԳՈՍ 1722-85) Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների: Ներքին կառուցվածքը՝ միջուկը հյութալի, մուգ կարմիր՝ տարբեր երանգների: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 5-14սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափսերից և մեխանիկական վնասվածքներով 3 մմ ավելի խորությամբ՝ ընդհանուր քանակի 5%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավելի, քան ընդհանուր քանակի 1%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

42-50	գազար /Գազար վաղահաս/	Թարմ գազարի որակի տեխնիկական պահանջները (ԳՈՍՏ 32284-2013) Բարձր և առաջին տեսակի: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով)՝ - բարձր տեսակին՝ սեպտեմբերի 1-ից հետո 20-45մմ, - առաջին տեսակին՝ մինչև սեպտեմբերի 1-ը 20-40մմ, սեպտեմբերի 1-ից հետո 20-60մմ, - երկարությունը ոչ պակաս 10սմ-ից: Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, չթառամած, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների, միագույն: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից ոչ ավել 0,5սմ՝ ընդհանուր քանակության 10%-ից ոչ ավելի: Առաջին տեսակի համար թույլատրվում է շեղումներ՝ ծայրերի բացակայությամբ, կոտրված (երկարությունը 70մմ-ից ոչ պակաս), ճաքերով, գլխիկների վնասվածքներով ընդհանուր քանակից ոչ ավել 5%, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում: Առաջին տեսակի համար թույլատրվում է արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավելի, քան ընդհանուր քանակի 1%-ի չափով, իսկ բարձր տեսակի համար չի թույլատրվում: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:
51-61	գազար /Գազար ուշահաս գարնան/	(ԳՕՍՏ 1721-85) Սովորական և ընտիր տեսակի: Արտաքին տեսքը՝ արմատապտուղները թարմ, չթառամած, ամբողջական, առանց հիվանդությունների, չոր, չկեղտոտված, առանց ճաքերի և վնասվածքների, միագույն: Արմատապտուղների չափերը (ամենամեծ լայնակի տրամագծով) 2,5-6,0սմ: Թույլատրվում է շեղումներ նշված չափերից 0,5սմ՝ ընդհանուր քանակության 10%-ից ոչ ավելի: Արմատապտուղներին կպած հողի քանակությունը ոչ ավելի, քան ընդհանուր քանակի 1%: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011 և 022/2011, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Չ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարման ժամկետ
1	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**33,524**	**79**	**2648396**	**Ապրանքի մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ը պարբերության պահանջները:**
	54122 /Կուբաթի/	կգ	13,924	79	1099996	
	60369 /Գորիս/		2,820	79	222780	
	73128 /Կապան/		5,040	79	398160	
	60913 /Սիսիան/		4,908	79	387732	
	70011 /Աղիտու/		532	79	42028	
	50869 /Մեղրի/		5,304	79	419016	
	83117 /Գորիս/		996	79	78684	
2	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**4,713**	**79**	**372327**	
	55035 /Գյումրի/	կգ	2,865	79	226335	
	56952 /Գյումրի/		466	79	36814	
	53661 /Գյումրի/		1,382	79	109178	
3	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**4,388**	**79**	**346652**	
	63853 /Վանաձոր/	կգ	2,918	79	230522	
	72035 /Վանաձոր/		408	79	32232	
	51556 /Ստեփանավան/		664	79	52456	
	53620 /Փամբակ/		398	79	31442	
4	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**17,374**	**79**	**1372546**	
	43755 /Զորանքարա/	կգ	1,858	79	146782	
	13516 /Էջմիածին/		2,918	79	230522	
	60925 Արմավիր/		12,598	79	995242	
5	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**23,744**	**79**	**1875776**	
	75937 /Զոփոլու/	կգ	16,381	79	1294099	
	25836 /Ճամբարակ/		1,724	79	136196	
	59016 /Զոդ/		3,316	79	261964	
	28418 /Կարճաղբյուր/		1,261	79	99619	
	32236 /Մարտունի/		796	79	62884	
	62426 /Վարդենիս/		266	79	21014	

6	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**2,781**	**79**	**219699**
	58831 /Արարատ/	կգ	2,781	79	219699
7	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**2,918**	**79**	**230522**
	54850 /Մուղնի/	կգ	2,918	79	230522
8	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**5,968**	**79**	**471472**
	70179 /Վայք/	կգ	5,968	79	471472
9	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**25,596**	**79**	**2022084**
	51036 /Տավուշ/	կգ	7,294	79	576226
	21127 /Մեհրաբ/		6,234	79	492486
	51191 /Իջևան/		4,244	79	335276
	27229 /Նոյեմբերյան/		4,244	79	335276
	81151 /Դիլիջան/		3,580	79	282820
10	**կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**6,633**	**79**	**524007**
	95532 /Բալահովիտ/	կգ	214	79	16906
	55076 /Լուսակերտ/		6,419	79	507101
11	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**30,630**	**132**	**4043160**
	54122 /Կուբաթլի/	կգ	11,733	132	1548756
	60369 /Գորիս/		3,088	132	407616
	73128 /Կապան/		4,570	132	603240
	60913 /Սիսիան/		5,187	132	684684
	50869 /Մեղրի/		5,187	132	684684
	83117 /Գորիս/		865	132	114180
12	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**4,016**	**132**	**530112**
	55035 /Գյումրի/	կգ	2,470	132	326040
	56952 /Գյումրի/		434	132	57288
	53661 /Գյումրի/		1,112	132	146784
13	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**3,953**	**132**	**521796**
	63853 /Վանաձոր/	կգ	2,964	132	391248
	51556 /Ստեփանավան/		618	132	81576
	53620 /Փամբակ/		371	132	48972
14	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**20,688**	**132**	**2730816**
	75937 /Զոփզոս/	կգ	14,820	132	1956240
	25836 /Ճամբարակ/		1,298	132	171336
	59016 /Զոդ/		2,470	132	326040
	28418 /Կարճաղբյուր/		1,112	132	146784
	32236 /Մարտունի/		741	132	97812
	62426 /Վարդենիս/		247	132	32604
15	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**2,286**	**132**	**301752**
	58831 /Արարատ/	կգ	2,286	132	301752
16	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**2,470**	**132**	**326040**
	54850 /Մուղնի/	կգ	2,470	132	326040
17	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**4,940**	**132**	**652080**
	70179 /Վայք/	կգ	4,940	132	652080
18	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**19,145**	**132**	**2527140**
	51036 /Տավուշ/	կգ	5,434	132	717288
	21127 /Մեհրաբ/		4,693	132	619476
	51191 /Իջևան/		3,458	132	456456
	27229 /Նոյեմբերյան/		2,780	132	366960
	81151 /Դիլիջան/		2,780	132	366960
19	**կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**6,114**	**132**	**807048**
	95532 /Բալահովիտ/	կգ	186	132	24552
	55076 /Լուսակերտ/		5,928	132	782496
20	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**4,465**	**79**	**352735**
	55565 /Նուբարաշեն/	կգ	828	79	65412
	31549 /Երևան/		430	79	33970

	14746 /Երևան/		415	79	32785
	25149 /Երևան/		125	79	9875
	14203 /Երևան/		1,243	79	98197
	88865 /Երևան/		305	79	24095
	42285 /Երևան/		83	79	6557
	59559 /Երևան/		606	79	47874
	32822 /Երևան/		388	79	30652
	10724 /Երևան/		42	79	3318
21	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**7,029**	**79**	**555291**
	54122 /Կուբաթլի/		2,760	79	218040
	60369 /Գորիս/		691	79	54589
	73128 /Կապան/		1,050	79	82950
	60913 /Սիսիան/	կգ	1,104	79	87216
	70011 /Աղիտու/		112	79	8848
	50869 /Մեղրի/		1,104	79	87216
	83117 /Գորիս/		208	79	16432
22	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,038**	**79**	**82002**
	55035 /Գյումրի/		608	79	48032
	56952 /Գյումրի/	կգ	125	79	9875
	53661 /Գյումրի/		305	79	24095
23	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**886**	**79**	**69994**
	63853 /Վանաձոր/		581	79	45899
	72035 /Վանաձոր/	կգ	83	79	6557
	51556 /Ստեփանավան/		139	79	10981
	53620 /Փամբակ/		83	79	6557
24	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**3,617**	**79**	**285743**
	43755 /Զոբանքարա/		359	79	28361
	13516 /Էջմիածին/	կգ	635	79	50165
	60925 Արմավիր/		2,623	79	207217
25	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**4,447**	**79**	**351313**
	75937 /Զոփոլու/		3,036	79	239844
	25836 /Ճամբարակ/		332	79	26228
	59016 /Զոռ/		608	79	48032
	28418 /Կարճաղբյուր/	կգ	249	79	19671
	32236 /Մարտունի/		166	79	13114
	62426 /Վարդենիս/		56	79	4424
26	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**552**	**79**	**43608**
	58831 /Արարատ/	կգ	552	79	43608
27	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**608**	**79**	**48032**
	54850 /Մուղնի/	կգ	608	79	48032
28	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,243**	**79**	**98197**
	70179 /Վայք/	կգ	1,243	79	98197
29	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**4,696**	**79**	**370984**
	51036 /Տավուշ/		1,270	79	100330
	21127 /Մեհրաբ/		1,160	79	91640
	51191 /Իջևան/	կգ	801	79	63279
	27229 /Նոյեմբերյան/		774	79	61146
	81151 /Դիլիջան/		691	79	54589
30	**բազուկ /Բազուկ վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,397**	**79**	**110363**
	95532 /Բալահովիտ/	կգ	45	79	3555
	55076 /Լուսակերտ/		1,352	79	106808
31	**բազուկ /Բազուկ ուշահաս զարնան/, այդ թվում՝**	**կգ**	**4,839**	**114**	**551646**
	55565 /Նուբարաշեն/	կգ	855	114	97470
	31549 /Երևան/		855	114	97470
	25149 /Երևան/		129	114	14706

	14203 /Երևան/		1,284	114	146376
	88865 /Երևան/		315	114	35910
	42285 /Երևան/		86	114	9804
	59559 /Երևան/		800	114	91200
	32822 /Երևան/		429	114	48906
	10724 /Երևան/		86	114	9804
32	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**7,376**	**114**	**840864**
	54122 /Կուբաթլի/		2,850	114	324900
	60369 /Գորիս/		714	114	81396
	73128 /Կապան/		1,057	114	120498
	60913 /Սիսիան/	կգ	1,284	114	146376
	50869 /Մեղրի/		1,226	114	139764
	83117 /Գորիս/		245	114	27930
33	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**929**	**114**	**105906**
	55035 /Գյումրի/		570	114	64980
	56952 /Գյումրի/	կգ	101	114	11514
	53661 /Գյումրի/		258	114	29412
34	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**916**	**114**	**104424**
	63853 /Վանաձոր/		686	114	78204
	51556 /Ստեփանավան/	կգ	144	114	16416
	53620 /Փամբակ/		86	114	9804
35	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**3,592**	**114**	**409488**
	43755 /Զոբանքարա/		371	114	42294
	13516 /Էջմիածին/	կգ	656	114	74784
	60925 Արմավիր/		2,565	114	292410
36	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**4,778**	**114**	**544692**
	75937 /Զուիռլու/		3,420	114	389880
	25836 /Ճամբարակ/		300	114	34200
	59016 /Զոռ/	կգ	570	114	64980
	28418 /Կարճաղբյուր/		258	114	29412
	32236 /Մարտունի/		172	114	19608
	62426 /Վարդենիս/		58	114	6612
37	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**530**	**114**	**60420**
	58831 /Արարատ/	կգ	530	114	60420
38	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**570**	**114**	**64980**
	54850 /Մուղնի/	կգ	570	114	64980
39	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**1,140**	**114**	**129960**
	70179 /Վայք/	կգ	1,140	114	129960
40	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**4,827**	**114**	**550278**
	51036 /Տավուշ/		1,284	114	146376
	21127 /Մեհրաբ/		1,170	114	133380
	51191 /Իջևան/	կգ	855	114	97470
	27229 /Նոյեմբերյան/		855	114	97470
	81151 /Դիլիջան/		663	114	75582
41	**բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**1,417**	**114**	**161538**
	95532 /Բալահովիտ/	կգ	48	114	5472
	55076 /Լուսակերտ/		1,369	114	156066
42	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**12,240**	**194**	**2374560**
	54122 /Կուբաթլի/		4,831	194	937214
	60369 /Գորիս/		1,151	194	223294
	73128 /Կապան/		1,748	194	339112
	60913 /Սիսիան/	կգ	1,887	194	366078
	70011 /Աղիտու/		2,071	194	401774
	50869 /Մեղրի/		184	194	35696
	83117 /Գորիս/		368	194	71392

43	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,590**	**194**	**308460**
	55035 /Գյումրի/	կգ	1,012	194	196328
	56952 /Գյումրի/		163	194	31622
	53661 /Գյումրի/		415	194	80510
44	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,527**	**194**	**296238**
	63853 /Վանաձոր/	կգ	1,012	194	196328
	72035 /Վանաձոր/		145	194	28130
	51556 /Ստեփանավան/		231	194	44814
	53620 /Փամբակ/		139	194	26966
45	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**7,777**	**194**	**1508738**
	75937 /Զոփոզոս/	կգ	5,520	194	1070880
	25836 /Ճամբարակ/		507	194	98358
	59016 /Զոդ/		967	194	187598
	28418 /Կարճաղբյուր/		415	194	80510
	32236 /Մարտունի/		276	194	53544
	62426 /Վարդենիս/		92	194	17848
46	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**920**	**194**	**178480**
	58831 /Արարատ/	կգ	920	194	178480
47	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,012**	**194**	**196328**
	54850 /Մուղնի/	կգ	1,012	194	196328
48	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**1,979**	**194**	**383926**
	70179 /Վայք/	կգ	1,979	194	383926
49	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**7,454**	**194**	**1446076**
	51036 /Տավուշ/	կգ	2,071	194	401774
	21127 /Մեհրաբ/		1,840	194	356960
	51191 /Իջևան/		1,288	194	249872
	27229 /Նոյեմբերյան/		1,151	194	223294
	81151 /Դիլիջան/		1,104	194	214176
50	**գազար /Գազար վաղահաս/, այդ թվում՝**	**կգ**	**2,218**	**194**	**430292**
	95532 /Բալահովիտ/	կգ	74	194	14356
	55076 /Լուսակերտ/		2,144	194	415936
51	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**8,060**	**165**	**1329900**
	55565 /Նուբարաշեն/	կգ	1,425	165	235125
	31549 /Երևան/		1,425	165	235125
	25149 /Երևան/		215	165	35475
	14203 /Երևան/		2,139	165	352935
	88865 /Երևան/		524	165	86460
	42285 /Երևան/		144	165	23760
	59559 /Երևան/		1,330	165	219450
	32822 /Երևան/		714	165	117810
	10724 /Երևան/		144	165	23760
52	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**12,381**	**165**	**2042865**
	54122 /Կուբաթլի/	կգ	4,750	165	783750
	60369 /Գորիս/		1,189	165	196185
	73128 /Կապան/		1,759	165	290235
	60913 /Սիսիան/		2,139	165	352935
	50869 /Մեղրի/		2,139	165	352935
	83117 /Գորիս/		405	165	66825
53	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**1,547**	**165**	**255255**
	55035 /Գյումրի/	կգ	950	165	156750
	56952 /Գյումրի/		168	165	27720
	53661 /Գյումրի/		429	165	70785
54	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**1,523**	**165**	**251295**
	63853 /Վանաձոր/	կգ	1,140	165	188100
	51556 /Ստեփանավան/		239	165	39435
	53620 /Փամբակ/		144	165	23760

55	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**5,988**	**165**	**988020**	
	43755 /Զոբանքարա/	կգ	619	165	102135	
	13516 /Էջմիածին/		1,094	165	180510	
	60925 Արմավիր/		4,275	165	705375	
56	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**7,959**	**165**	**1313235**	
	75937 /Զոփոլու/	կգ	5,700	165	940500	
	25836 /Ճամբարակ/		500	165	82500	
	59016 /Զոդ/		950	165	156750	
	28418 /Կարճաղբյուր/		429	165	70785	
	32236 /Մարտունի/		285	165	47025	
	62426 /Վարդենիս/		95	165	15675	
57	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**880**	**165**	**145200**	
	58831 /Արարատ/	կգ	880	165	145200	
58	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**950**	**165**	**156750**	
	54850 /Մուղնի/	կգ	950	165	156750	
59	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**1,900**	**165**	**313500**	
	70179 /Վայք/	կգ	1,900	165	313500	
60	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**7,511**	**165**	**1239315**	
	51036 /Տավուշ/	կգ	2,139	165	352935	
	21127 /Մեհրաբ/		1,854	165	305910	
	51191 /Իջևան/		1,379	165	227535	
	27229 /Նոյեմբերյան/		1,070	165	176550	
	81151 /Դիլիջան/		1,069	165	176385	
61	**գազար /Գազար ուշահաս գարնան/, այդ թվում՝**	**կգ**	**2,301**	**165**	**379665**	
	95532 /Բալահովիտ/	կգ	80	165	13200	
	55076 /Լուսակերտ/		2,221	165	366465	

Ծանոթություն՝ Մատակարարը պարտավոր է բանջարեղենի մատակարարումը զորամասերին իրականացնել համաձայն ՀՀ ՋՈՒ ԹՎ պարենային ծառայության կողմից տրված ապրանքագրերում նշված քանակների և ժամկետների:

Բանջարեղենի առաքումը զորամասեր իրականացվելու է մատակարարների տրանսպորտային միջոցներով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ֆ/Ա Բագրատ Միրզոյան

Բ. ՄԻՐԶՈՅԱՆ

Հ/Հ Հ. Դոխանյան
Հեռ. 010350528

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-7/11-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	CPV կոդը	Պայմանագրի կատարման համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ լրացուցիչ կնքվելիք Համաձայնագրերով սահմանված վճարման ժամանակացույցով
1	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/549	
2	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/550	
3	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/551	
4	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/552	
5	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/553	
6	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/554	
7	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/555	
8	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/556	
9	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/557	
10	կաղամբ մաքրած /Կաղամբ վաղահաս/	03221410/558	
11	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/560	
12	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/561	
13	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/562	
14	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/564	
15	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/565	
16	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/569	
17	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/566	
18	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/567	
19	կաղամբ մաքրած /Կաղամբ ուշահաս գարնան/	03221410/568	
20	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/546	
21	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/547	
22	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/548	
23	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/549	
24	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/550	
25	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/551	
26	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/552	
27	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/553	
28	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/554	
29	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/555	
30	բազուկ /Բազուկ վաղահաս/	03221100/556	
31	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/557	
32	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/558	
33	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/559	
34	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/560	
35	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/561	
36	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/562	
37	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/563	
38	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/564	
39	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/565	
40	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/566	
41	բազուկ /Բազուկ ուշահաս գարնան/	03221100/567	
42	գազար /Գազար վաղահաս/	03221110/547	
43	գազար /Գազար վաղահաս/	03221110/548	
44	գազար /Գազար վաղահաս/	03221110/549	
45	գազար /Գազար վաղահաս/	03221110/551	
46	գազար /Գազար վաղահաս/	03221110/552	
47	գազար /Գազար վաղահաս/	03221110/553	
48	գազար /Գազար վաղահաս/	03221110/554	
49	գազար /Գազար վաղահաս/	03221110/555	
50	գազար /Գազար վաղահաս/	03221110/556	
51	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/557	
52	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/558	
53	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/559	
54	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/560	

55	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/561	
56	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/562	
57	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/563	
58	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/564	
59	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/565	
60	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/566	
61	գազար /Գազար ուշահաս գարնան/	03221110/567	

Ծանոթություն՝ Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

Ֆ/Ա Բագրատ Միրզոյան

Բ. ՄԻՐԶՈՅԱՆ

հ/Հ Հ. Դանիելյան
ՀՎ 010350528

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-20-7/11-2 ծածկագրով
գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-20-7/11-2 ծածկագրով
գնման պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն